

ԱՐԺԵՔԱՎՈՐ ՆԿԱՐՆԵՐԻ ՆՎԻՐՈՒՄԸ ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻՆ

ՔՈՒՔՐԾԵ.— Մոտերս Հայկական դեմոկրատական կոմիտեն Հայաստան պիտի ուղարկե երեք արժեքավոր նկարներ, որոնք պիտի ավելնան Երևանի Պետական գեղարվեստական թանգարանին ճոխ հավաքածուներուն վրա:

Սույն երեք նկարները, որոնք գնահատված են գեղարվեստական շրջանակներու կողմից, Հայաստանի Պետական թանգարանին կնվիրվին Գրիգոր Զամբակչյանի կողմից: Թղթակից-անդամ Ռուսեն Ժողովրդական Լեռնապուրիկայի Ակադեմիայի, Սովետական Հայաստանի 32-րդ տարեդարձին առթիվ:

Դեռ թարմ է ամենուս մտքին մեջ նվիրատվությունը վեց արժեքավոր նկարներու, զորս Զամբակչյան քանի մը տարի առաջ ըրավ Երևանի նույն հաստատության, որուն վարչությունն ստացավ շնորհակալության գիր մը:

Փոքր գաղափար մը տալու համար այս երեք նկարներուն մասին, ըսենք ամենեն առաջ՝ թե անոնք ելած են վրձինեն հուշակավոր նկարիչներու:

Այսպես, առաջինը այդ նկարներեն, որ կներկայացնեն «Մայր տաճարի ներքնամաս» մը; գործն է հուլանդացի համբավավոր Neefs Pieter-ի, ներկայացուցիչներեն մին՝ Ֆլաման դպրոցի, ծնած Անվերսի մեջ 1570-ին և մեռած 1651 թվին: Աշակերտած

է մեծ վարպետ Հենտրիկ Ստենվիկի, և ինքզինք կատարելագործած՝ եկեղեցիներու ներքնամասեր նկարելու գործին մեջ: Լուսրի թանգարանը այս նկարիչին ունի ութը գործեր, «եկեղեցիի ներքնամասեր», որոնք, համաձայն ձեռնհաս անձնավորություններու, ավելի փոքր են քան այն, որով մոտերս պիտի օժտվի մեր Հայրենիքի Պետական թանգարանը: Հակառակ մոտավորապես 350 տարվան հնություն, նկարին գույները կմնան միշտ վնեղանի:

Երկրորդ նկարը կներկայացնեն «Յոնտենը-ըլո անտառին եզրը»; գործ՝ Ֆրանսացի հայտնի նկարիչ Դիագ-դե Պենայի (Նորսիս Վիրժիլ), ծագումով սպանացի, ծնած Բորդոյի մեջ և մեռած 1876-ին: Հեղինակն է արևազօծ պատանդիկներու, որոնք ռաբիստորեն պատկերացուցած են բնությունը:

Երրորդ նկարը կներկայացնեն կին մը և «ասպետ» մը սրահի մը մեջ, թարմ, վճիռ և համակրելի գույներով, և, միևնույն ատեն ստվերներու ներդաշնակ խաղերով: Ան կնկատվի 19-րդ դարու Ֆրանսական ռեալիստական նկարչության մեկ հաջող գործը:

Գր. Զամբակչյանի սույն հայրենասիրական ժեստը արժանի է ամեն գնահատանքի ու կրնա օրինակ հանդիսանալ մեր բոլոր հայրենակիցներուն:

(Արտատպված Բովսարեստի «ՆՈՒ ԿՅԱՆՔ» քերթից)

ԱՐՏԱՌՈՑ ՄԻ ԴԵՊԲ 20-ՐԴ ԴԱՐՈՒՄ

Միսիսիպիի հովիտը դժբախտաբար զուրկ է հայ եկեղեցիի և հայ քահանայի: Հանգուցյալի մը թաղման համար դիմում եղավ երկու-երեք գաղութներու, բայց չհաջողվեցավ քահանայի մը հոս գալը մինչև վերջին օրը: Հանգուցյալի եղբայրը դիմում կրնե իրենց մոտակա կաթոլիկ եկեղեցվո քահանային, որ իրեն եղբոր թաղման արարողություն կատարե:

Քահանան կհարցնե, թե ո՞ր պիտի թաղվի հանգուցյալը. եղբայրը կըսե, թե «Կալհալա գերեզմանատունը. քեռիս հոն թաղված է և մենք հոն գետին գներ ենք նախապես մեզի համար»: Քահանան զարմացած կհարցնե, թե «Դուք չե՞ք գիտեր, որ այդ և նման գե-

րեզմանոցներ թաղվածները հարություն չեն առներ, արթնություն չեն երթար»: Քահանան կըսե, թե «Մենք քեռիիդ մարմինը կփոխադրենք կաթոլիկ գերեզմանատունը և կաթոլիկ կօծենք, և եղբայրդ արդեն իր մահվան մահիճին մեջ կաթոլիկ օծված կըլլա. այլապես առաքողությունը կմեծենա»:

Այս դիմումը ուրբաթ օր կլինի: Բայց շաբաթ կեսօրին Գալֆայան վարդապետ եկավ և թաղման արարողությունը կատարեց:

Թող ապագային պատմագիր մը արձանագրե, որ այսպիսի արտառուց դեպք մը պատահած է 20-րդ դարուն Միսիսիպիի հովտին մեջ: Ականջը խոսի կարդինալ Աղաջանյանին:

(Նյու-Յորք, «ՎՐԱՐՆԵՐ», 6 դեկտեմբերի 1952 թ.)

